Քաղաքացիական գործ
ՏԴ1/1075/02/18

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՇԻՆԱՐԱՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

06.02.2019թ. ք. Իջևան

ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Իսկանդարյանս, քննարկելով վարույթիս տակ գտնվող քաղաքացիական գործով ըստ հայցի ՀՀ ոստիկանություն Տավուշի մարզային վարչության ընդդեմ Ալբերտ Ռոբերտի Բաբայանի, երրորդ անձինք՝ Ռոբերտ Մանուկի Բաբայանի, Թամարա Հովսեփի Բաբայանի, Արման Ռոբերտի Բաբայանի, Նաիրա Ռոբերտի Բաբայանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին, դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություններ նշանակելու մասին նշանակման հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

09.11.2018 թվականին ՀՀ ոստիկանություն Տավուշի մարզային վարչության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ալբերտ Ռոբերտի Բաբայանի, երրորդ անձինք՝ Ռոբերտ Մանուկի Բաբայանի, Թամարա Հովսեփի Բաբայանի, Արման Ռոբերտի Բաբայանի, Նաիրա Ռոբերտի Բաբայանի՝ համատեղ սեփականություն հանդիսացող ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին:
Դատարանի 15.11.2018թ. որոշմամբ հայցադիմումն ընդունվել է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Իսկանդարյանի վարույթ:
06.02.2019 թվականին նշանակված նախնական դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Դատարան դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին՝ խնդրելով փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝
1. Հնարավոր է արդյո՞ք ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերից բնեղենով առանձնացնել համասեփականատեր Ալբերտ Ռոբերտի Բաբայանի բաժնեմասը, եթե այո՝ ապա ի՞նչ եղանակով:
2. Որքա՞ն են գնահատվում ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի շուկայական արժեքները:
3. Որքա՞ն են կազմում համատեղ սեփականության իրավունքով պատասխանող Ալբերտ Ռոբերտի Բաբայանին պատկանող ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի բաժնեմասերի շուկայական արժեքները:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:
Դատարանը գտնում է, որ վերոնշյալ հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, ուստի պետք է նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական փորձաքննություններ:
Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86, 157-158-րդ հոդվածներով, դատարանը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Միջնորդությունը բավարարել:
Թիվ ՏԴ1/1075/02/18 քաղաքացիական գործով նշանակել դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություններ՝ դրանց կատարումը հանձնարարելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին /ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 24/:
Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.
1. Հնարավոր է արդյո՞ք ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերից բնեղենով առանձնացնել համասեփականատեր Ալբերտ Ռոբերտի Բաբայանի բաժնեմասը, եթե այո՝ ապա ի՞նչ եղանակով:
2. Որքա՞ն են գնահատվում ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի շուկայական արժեքները:
3. Որքա՞ն են կազմում համատեղ սեփականության իրավունքով պատասխանող Ալբերտ Ռոբերտի Բաբայանին պատկանող ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի բաժնեմասերի շուկայական արժեքները:
Փորձագետներին տրամադրել ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ համայնքում գտնվող 11-014-0312-0032, 11-014-0338-0031, 11-014-04-26-0017, 11-

014-0348-0002, 11-014-0320-0046, 11-014-0401-0024 և 11-014-0361-0094 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի կադաստրային գործերիի լուսապատճենները:

Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:

Կողմի միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերի համար վճարում է այդ կողմը:

Դատարանի կամ կողմերի նախաձեռնությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերը կատարվում են դատական ծախսերի հաշվին:

Հաշվի առնելով, որ փորձաքննության միջնորդությունը ներկայացրել է հայցվոր կողմը, Դատարանը գտնում է, որ փորձաքննության հետ կապված ծախսերը պետք է նախապես կրի հայցվոր կողմը, իսկ Դատարանը վերջնական դատական ակտով կանդրադառնա կրած դատական ծախսերը կողմերի միջև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածով սահմանված կարգով բաշխելու հարցին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանն իրավունք ունի կասեցնել գործի վարույթը, եթե նշանակվել է փորձաքննություն:

Վերոգրյալ հոդվածի դիսպոզիտիվ էությունից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում անհրաժեշտ է կասեցնել գործի վարույթը՝ մինչև նշանակված փորձաքննության արդյունքում կայացվելիք փորձագիտական եզրակացության ստանալը:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Մատակարար	ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ	
Հասցե **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	քաղաք Երևան, Իսակովի 24 900018005588 ՀՀ ՖՆ գանձապետարան Երևանի թիվ 1 ՏԳԲ 01836525	**Կանխավճարային հաշիվ N 03** օր 19/07/2019
Վճարող **Հասցե** **Հ/Հ** **Բանկ** **ՀՎՀՀ**	ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ ք.Երևան, Նալբանդյան 130 900011021947 ՀՀ ՖՆ Աշխատակազմի գործառնական վարչություն 01533334	Պայմանագիր/պատվեր N 19-0018Ք
Լրացում՝	ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Իսկանդարյանի 06.02.2019 թվականին դատաշինարարատեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշում ՏԴ1/1075/02/18 քաղաքացիական գործ	

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	Փորձաքննության ծառայության մատուցում 19-0018 Ք	7	հատ	262,200	262,200
			Ընդամենը՝ (ներառյալ ԱԱՀ-ն)		262,200
			Վճարման գումարը՝		262,200

Գումարը բառերով՝ Երկու հարյուր վաթսուներկու հազար երկու հարյուր ՀՀ դրամ

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

Տնօրեն՝ _____ Ա. Հովսեփյան

Գլխ.հաշվ.՝ _____ Ա. Մարգարյան

Կ.Տ.

ՀՀ ԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ Պետական կառավարչական հիմնարկ